

և հրապուրիչ պատկերի մը ձևը, այնպէս որ աչքը երբեք չյոգնիր դիտելէ :

Մինչև Կոստանդիանոսի ժամանակ Նազարէթ հրէական քաղաք մըն էր : Բայց երբ քրիստոնէութիւնը յաղթանակեց հռոմէական կայսրութեան մէջ, հոյակապ պազլիլիքա մը շինուեցաւ այն տեղւոյն վրայ ուր Ս. Կոյսը ընդունած էր Փաբրիէլ հրեշտակապետի այցելութիւնը : Այն տունը ուր ապրած էր Յիսուսի մայրը ծանօթ էր երկրի բնիկներուն եւ քրիստոնեաները մեծ պատուով կը յարգէին զայն :

Ս. Եպիփան կը պատմէ թէ 339ին կը բնակէր Սկիւթուպոլիս, Տիրեւրիացի կոմս Յովսեպոսի մօտ : Վերջինս պատմած է իրեն թէ Կոստանդիանոս կայսրը պաշտօն տուած է իրեն «Քրիստոսի եկեղեցիներ կառուցանել հրեաներու քաղաքներուն և աւաններուն մէջ, ուր ոչ ոք կարողացած էր կառուցանել մինչեւ այն ատեն, վասնզի ո՛չ յոյները, ո՛չ սամարացիները և ոչ ալ քրիստոնեաները իրենց մէջ չէին ընդունուած, մանաւանդ Տիրեւրիայի, Սէֆֆորիսի, Նազարեթի և Կափառնաուովի մէջ» :

Շատ նշանաւոր ուխտաւորներ այցելած են Նազարէթ : Բլէզանոսի ուխտաւորը գտած է հոն բացի Ս. Կուսի Տաճարի փոխուած տունէն, հին Սիևակոկը : 670ին Արզուլֆ եպիսկոպոս կը տեղեկացնէ թէ Նազարէթը պարիսպ չունէր, այլ երկու եկեղեցիներ՝ Աւետման և Տաճումի : Զ. դարու հեղինակ մը Liber nominum locarum exactis խորագրով գրքոյկի մը մէջ գրած է. «Նազարէթը Փալիլիոյ մէկ աւանն է՝ ոչ հեռու թաքոր լեռնէն : Մեր Տէրը անկէ է որ Նազովրեցի կոչուած է : Հոն կը տեսնուի եկեղեցի մը այն տեղւոյն վրայ ուր հրեշտակը Ս. Կուսին աւետիսը տուաւ, եւ